# ՆՐԱՆՔ ԴԻՄԵՑԻՆ ՀԻՍՈՒՍԻՆ

*Մարկոս Ավետարանի առաջին գլխում մենք տեսնում ենք մի կնոջ բժշկության մասին: Այն հետևում է մեկ այլ բժշկության հետ կապված պատմության. Առաջինը տեղի է ունենում ժողովարանում, մյուսը՝ Սիմոնի և Անդրեասի տանը: Մեկը վերաբերում է տղամարդուն, մյուսը կնոջը: Առաջին դեպքը դիվահարության դեպքն է. երկրորդը սովորական ջերմություն է: Կարծես թե բանն այն է, որ Հիսուսը բուժում է բոլոր տեսակի խնդիրներ բոլոր տեսակի մարդկանց համար:*

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. Մար. 1.29-34

*29 Եւ <u>շուտով</u> ժողովարանից դուրս գալով, եկան Սիմօնի եւ Անդրէասի տունը՝ Յակոբի եւ*
*Յովհաննէսի հետ: 30 Եւ Սիմօնի զոքանչը ջերմության մեջ պառկած էր, եւ <u>շուտով</u> նորա*
*մասին ասեցին Հիսուսին: 31 Եւ նա մօտ եկավ վերկացրեց նորան՝ ձեռքիցը բռնելով. Եւ*
*շուտով ջերմությունը թողեց նորան, եւ նա ծառայում էր նորանց: 32 Եւ երբոր իրիկուն*
*եղաւ, արեգակը մայր մտնելիս, բոլոր հիվանդներին եւ դիվահարներին նորա մօտ*
*բերին: 33 Եւ քաղաքի բոլոր բնակիչները հավաքվել էին դռան առաջին: 34 Եւ շատ կերպ*
*կերպ ցավերով հիվանդներին բժշկեց, եւ շատ դեւեր հանեց. Եւ թույլ չէր տալիս*
*դեվերին որ խօսեն. Որովհետեւ նորան գիտեին:*

## I. ՆՐԱՆՔ ՀԻՍՈՒՍԻՆ ԻՐԵՆՑ ՀԵՏ ՏՈՒՆ ՏԱՐԱՆ: THEY TOOK JESUS HOME WITH THEM

***29 Եւ <u>շուտով</u> ժողովարանից դուրս գալով, եկան Սիմօնի եւ Անդրէասի տունը՝ Յակոբի եւ Յովհաննէսի հետ:***

- ***Եկեղեցուց ձեզ հետ տուն տարեք Հիսուսին: Այն ինչ կատարվում է կիրակի օրը եկեղեցում, ազդում ձեզ վրա երկուշաբթի օրը:***

  *Գործ. 2:46-47 - 46 Ամեն օր միաբանութեամբ տաճարումն էին լինում, եւ հաց էին կտրում տներում, եւ ուրախութիւնով եւ **սրտի միամտությունով** կերակուր էին ուտում.*

## I. ՆՐԱՆՔ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԴԻՄԵՑԻՆ ՀԻՍՈՒՍԻՆ: THEY IMMEDIATELY TURNED TO JESUS.

***30 Եւ Սիմօնի զոքանչը ջերմության մեջ պառկած էր, եւ <u>շուտով</u> նորա մասին ասեցին Հիսուսին: «Մարկոս ավետարանում x41 նշված է <u>շուտով</u> բառը:»***

- *Երբ դուք բախվում եք ինչ որ մի բանի, որը ձեր վերահսկողությունից դուրս է, մի սպասեք, անմիջապես դիմեք Հիսուսի:*

  *Մար. 1:12 - Եւ շուտով Հոգին նորան անապատը հանեց:*

  *Մար. 1:42 - Եւ երբոր ասեց նորան, շուտով բորոտութիւնը գնաց նորանից, եւ նա սրբուեցավ:*

  *Մար. 2:12 - Եւ նա շուտով վերկացավ, մահիճն առաւ, եւ ամենի առաջին դուրս գնաց.*

  1. ***Այսօր միգուց է դուք մտած եք, որ այդ «շուտով դիմելու և ստանալու» հավատքը չունեք:***

*Ավելի վաղ ժողովարանում Յիսուսը ազատեց մի մարդու, որը դիվահար էր: Տղամարդու հավատքի մասին ոչինչ չի նշվում և ոչ էլ Պետրոսի զոնքաջի հավատքի մասին: Ակնհայտորեն, նրանք, ովքեր խնդրեցին Յիսուսին օգնել, հավատում էին, որ Յիսուսը կարող էր ինչ-որ բան անել:*

## III. ԱՅՍ ԲՈՒԺՈՒՄԸ ՅԱԿԱՍՈՒՄ ԷՐ ՅԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ: THIS HEALING CONTRADICTED THE OLD TESTAMENT

***Մար. 1:21-22 - 21 Եւ շուտով շաբաթ օրը ժողովարան մտավ եւ սովորեցնում էր:***
***22 Եւ զարմանում էին նորա վարդապետութեան վրա. Որովհետեւ նա նորանց՝ ինչպէս իշխանություն ունեցող սովորեցնում էր եւ ոչ թէ դպիրների պէս:***

***31 Եւ նա մօտ եկավ վերկացրեց նորան՝ ձեռքից բռնելով.***
***Եւ շուտով ջերմությունը թողեց նորան, եւ նա ծառայում էր նորանց:***

***Քանի՞ անգամ է Յիսուսը դիպչել բուժելու համար: x***

*Ղուկ. 4:41 - 41 Եւ արեգակը մտնելիս՝ ամենքը, որ կերպ կերպ ցաւերով հիւանդներ ունէին, նորանց բերում էին նորա մօտ. նա էլ նորանց ամեն մէկի վրա ձեռք էր դնում՝ եւ բժշկում նորանց:*

*Մատ. 9:25 - 25 Եւ երբոր ամբոխը դուրս արուեցաւ, ինքը ներս մտաւ՝ նորա ձեռքիցը բռնեց, եւ աղջիկը վեր կացաւ:*

*Ղուկ. 7:14-15 - 14 Եւ մօտ եկաւ՝ դագաղին դպաւ. եւ տանողները կանգնեցին. եւ ասեց. Երիտասարդ, քեզ եմ ասում՝ Վեր կաց: 15 Եւ մեռելը վերկացաւ, նստեց եւ սկսեց խօսել. եւ նորան տուաւ իր մօրը:*

- ***Ինձ հետաքրքիր է, թե ինչպես եկեղեցին կկիրառի այս սուրբ գրությունները առաջիկա մի քանի տարիների ընթացքում:***

1. ***Նա կարող էր այս հրաշքն անել առանց նրան մոտենալու և դիպչելու: Ի՞նչու Տերը այդպես նախատեսեց:***

   ***Յամաձայն Ղևտացոց 26.16 և Երկրորդ Օրինաց 28.22 համարների՝ ջերմությունը կարող է մեկնաբանվել որպես պատիժ Աստծո կողմից ուղարկված նրանց, ովքեր խախտել են իր ուխտը: Սովորության համաձայն՝ նման դեպքերում միայն Աստված կարող էր միջամտել: Եվ նա արեց:***

***32 Եւ երբոր իրիկուն եղաւ, արեգակը մար մտնելիս, բոլոր հիվանդներին եւ դիվահարներին նորա մօտ բերին: 33 Եւ բոլոր քաղաքը ժողովուած էր դռան առաջին: 34 Եւ շատ կերպ կերպ ցավերով հիվանդներին բժշկեց, եւ շատ դեվեր հանեց. Եւ թույլ չէր տալիս դեվերին որ խօսեն. Որովհետեւ գիտում էին նորան:***

## ԱՂՈԹՔ

*Սիրելի Սուրբ Հոգի, խնդրում եմ ցույց տաս մեզ այսօր այն անձին որին կարող ենք անմիջապես բերել Հիսուսի մոտ: Զորացրու մեր հավատքը որպեսզի պաճառ հանդիսանա նրա հոգու, անձի և մարմնի բժշկության համար: Հիսուսի անունով եմ և նրա արյան զորությամբ, ամեն:*